

# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Ա. — ՇՐՋԱՆ ԺԳ. 1882 ՏԱՐԻ ԺԳ. ՅՈՒՆՎԱՐ 31.

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

### Ս. ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Վեհափառ եւ Սրբազնագոյն Հայրապետ ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. կաթուղիկոս խղէաս Եկեղեցեաց Հայաստանեայց կամի Աստուծով Ս. Միւռոնի օրհնութիւն կատարել ի 16ն Մայիսի յառաջիկայ 1882 թուականի աստ ի Մայր Աթոռոյս ի Ս. Էջմիածին, որոյ վասն փութամբ ծանուցանել համայն Հայկազուն եղբարց մերոց՝ հրաւիրելով զնոսա ի նոյն քաղձալի եւ հոգեւոր մեծ հանդէս:

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1952 Թ.

*Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծապանծ եւ փառաւոր խորհրդաւոր արարողութեանց մին եւ գլխաւորն է Ս. Միւռոնի օրհնութեան շնորհաբաշխ հանդէս, ուստի անշուշտ եմք՝ զի սիրելի Ազգայինք մեր յամենայն կողմանց աշխարհի հոգեւանդն անձկանօք պիտի դիմեն արժանանալ նոյն վսեմ հանդիսին տեսութեան եւ շնորհաց մասնակցութեան, միանգամայն նաեւ բազմադարեան շքեղափառ վկայից եւ պարծանաց Եկեղեցւոյ մերոյ Ս. Վայրաց եւ անգին եւ սրբազան հնութեանց ուխտի եւ այցելութեան պարտքը հատուցանելով՝ մխիթարուիլ հրճուանօք ըստ հոգւոյ:*